

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՂԱՐԱՐԱՂԻ ՆՈՒԱՃՄԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ

(1813 թ. 12 հոկտ. — 1913 թ. 12 հոկտ.)

Արդէն մի դար է, ինչ ուսաները ոտք են դրել Հայաստանի նրանց տիրապետած առաջին երկիրն է Ղարաբաղը, որ 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գիւլիստանում կայացած զաւնադրութեամբ պարսից և ռուսաց պետութիւնների միջև, անցաւ Ռուսաստանին: Այսպէս Ղարաբաղը բոլորում է իւր նուաճման հարիւրամեակը: Հարիւր տարին մեր դարում բաւական երկար ժամանակամիջոց է համարւում: Ղարաբաղի համար այդ հարիւր տարուայ կեանքը խիստ նշանակալից է: Այս հարիւրամեակը Ղարաբաղի վերաբերեալ մի շարք հարցեր է առաջադրում, որոնց քննելը, պարզաբանելը, լուծելը մի անբաժանելութիւն է ներկայացնում խիստ չափական, հետաքրքիր է իմանալ, թէ Ռուսահայաստանի այս կարևոր մասը՝ Ղարաբաղը հարիւր տարուայ ընթացքում կուլտուրական-տնտեսական դրպիսի յառաջագիմութիւն է ցոյց տուել, ինչպէս են նրա կեանքի պայմանները, ինչ կարիքներ ունի, ինչպիսի մօտաւոր ապագայ կարելի է սպասել նրանից հիմնուած տուեալների վրայ: Միւս կողմից ահագին հետաքրքրութիւն, կարևորութիւն է ներկայացնում Ղարաբաղի անցեալի ուսումնասիրութիւնը, ուսական տիրապետութիւնից առաջ: Հարիւրամեակը արամբարանորէն մի կարևոր խնդիր է դարձեցնում, թէ ինչ հետեանքներ է ունեցել, ինչ արդիւնքներ է տուել ռուսական տիրապետութիւնը մեզ համար:

Սրանք բոլորն էլ խիստ կարևոր, այժմէական խնդիրներ են, որոնց պատասխանը պէտք է լինէր այս հարիւրամեակին, որպէս ամբողջացած, լրիւ մի ժամանակամիջոցի վախճանիւ: Բայց այդ հնարաւոր չէ. նախ՝ որ ընդհանրապէս դժուար է այդ հարցերին պատասխանել և երկրորդ՝ հարկաւոր նախապատրաստութիւն չէ տեսնուած, վաղօրօք այդ ուղղութեամբ աշխատանքներ չեն եղել, բոլոր հարցերն էլ անմշակ դրութեան մէջ են: Հում նիւթերն անգամ չեն ժողովուած և մատնուած են կորստեան վտանգին:

Սոսեւլ այն մասին, թէ որքան կարևոր է մի որ և է երկրամասի, նոյն իսկ գաւառի պատմութեան, անցեալի ուսումնասիրութիւնն, աւելորդ է, այդ ամենքի համար պարզ է: Բայց այդ գիտակցելով հանդերձ մենք գործի չենք ձեռնարկում: Երկրամասերի, գաւառ-

ների ուսումնասիրութիւնից է կախուած մեծ մասամբ ամբողջացած հայոց պատմութեան երևան գալը, որին ամենքս այնքան անհամբերութեամբ սպասում ենք, Ղարաբաղը թէ իւր հեռու անցեալում և թէ վերջին դարերում շատ խոշոր դեր է խաղացել հայ կեանքում: Մեկիքութեան շրջանն ինքնին ամենահետաքրքիր էջերից մէկն է վերջին դարերի հայ կեանքի պատմութեան: Այդ շրջանի հետ մենք ներկայումս դեռ կապուած ենք, կրում ենք նրա ազդեցութիւնը, իսկ ինչ է արուած մինչև օրս այդ ուղղութեամբ: Կարելի է ասել համարեա թէ ոչինչ, Զունենք ոչ թէ միայն այդ շրջանի մի փոքր ի շատէ կանոնաւոր ուսումնասիրութիւն, այլ նոյն իսկ հում նիւթերը չեն ժողովուած: Մինչդեռ ժամանակը մեզ չէ սպասում, հետզհետէ մոտալուծւում, անհետանում են հնութեան յիշատակարանները: Եւ այս կորսւող կամ թաղնուած հնութիւնների ժողովելը, կարգի բերելն անհատների գործ է, ինչպէս մեզնում է լինում, այլ ընկերութիւնների, որոնք աւելի ձեռնհաս են այդ մասին հոգալ, միջոցներ տալ: Հայոց Ազգադրական և նորերս հիմնուած Հնագիտական-պատմական ընկերութիւնների վրայ է ընկնում այս պարտականութիւնը: Ուրախութեամբ ու երախտագիտութեամբ պէտք է արձանագրել, որ Հայոց Ազգադրական ընկերութիւնը ձեռնարկել է մեկիքութեան շրջանի վերաբերեալ պատմական աղբիւրները հրատարակել, և շուտով լոյս կտեսնէ առաջին գիրքը՝ Առաքել վարդապետի Տիգակի մեկիքութեան պատմութիւնը:

Ղարաբաղի մեկիքութեան շրջանի վերաբերեալ հնութիւններ շատ կան պիտուած, դեռ հետ է նրանց ձեռք բերելը: Մեկիքների բերդերի, պալատների, գերեզմանների րեկորներից դեռ մնում են, որոնց պէտք է պահպանել, խնամքով նկարել: Գտնել կարելի է նրանց գէնքերի, հագուստների և այլ իրերի մնացորդներ: Շատերի մօտ դեռ պահուած են մեկիքների զանազան թղթերը, շահերից, ոռոսաց թագաւորներից ստացած հրովարտականքի ժողովել է պէտք ժողովրդական գրոյցները, պատմական երկերը այդ շրջանի վերաբերեալ: Բայց մեծ կարևորութիւն են ներկայացնում ժամանակակից պատմագրութիւնները, գրաւոր աղբիւրները, որոնք գտնուում են մասնաւոր անձանց մօտ, կամ լոյս չեն ընծայուած: Ընթերցելու իւր խառնայի մեկիքութիւնները աշխատութեան մէջ յիշում է մի շարք աղբիւրներ մեծ մասամբ ձեռագիր, որոնք պէտք է ինքը սեփական ունեցած լինի: Խիստ կարևոր է, որ նրա ժառանգներից այդ կարևոր ձեռագրերը ձեռք բերուին և լոյս ընծայուեն: Ուրիշների մօտ նոյնպէս կարող են գտնուել այլ և այլ ձեռագրեր, որոնց նոյնպէս պէտք է ձեռք բերել և հրատարակել: Եւ եթէ այս բոլոր նիւթերը ժողովեն, հրատարակուեն, ուսումնասիրութեան գործը կհեշտանայ, ուսումնասիրողներ կգտնուեն:

Պակաս կարևորութիւն, հետաքրքրութիւն չէ ներկայացնում Ղարաբաղի անցեալը ուստայ տիրապետութեան տակ Այսքան մօտ ժամանակի վերաբերեալ նոյնպէս չունենք որևէ ուսումնասիրութիւն։ Մինչդեռ հում, պատրաստի նիւթեր այս չրջանը համեմատօրէն բաւական ունի։ Արդէն լոյս են ընծայուած շատ գովումներ, ֆնացածներն էլ կարելի է գտնել արխիւներում։ Բայց այդ եղածով չպէտք է բաւականանալ։ Շատ բաներ կան, որոնք չեն մտել պաշտօնական գովումներին, արխիւների մէջ։ Նրանց նոյնպէս պէտք է որոնել, գտնել, ժողովել։ Յանկալի է, որ մեր պատմական, հրատարակչական ընկերութիւնները ձեռք բերեն, ժողովեն այդ գովումներները և դրանց թարգմանութիւնը տան։ Այս գովումներին ուսումնասիրութիւնը կպարզէ, թէ ինչ հետեանքներ, արդիւնքներ է տուել մեզ ուստայ տիրապետութիւնը։

Ղարաբաղի այս հարիւր տարուայ կուլտուրական-տնտեսական կեանքի ուսումնասիրութեան համար նոյնպէս ոչինչ է արուած։ Արդեօք այս գաւառը յառաջադիմում է, թէ յետադիմում, ինչ ապագայ է նրան սպասում, յայտնի չէ։ Պնդողներ կան, որ նա յետադիմում է, ապագայ չունի, բայց կան և այնպիսիները, որոնք մեծ յոյսեր ունեն։ Երկու կողմերն էլ մեծ մասամբ ենթադրութիւններ են անում, չեն հիմնուած տուեալների վրայ։ Ահա այստեղ զգացւում է ուսումնասիրութեան բացը։ Այս պահանջը միանգամայն այժմէական է։ Ապրող սերնդի շահը հէնց պահանջում է այդ։ Շատ ձեռնարկութիւններ, հաստատութիւններ, բարեփոխութիւններ դրան են սպասում։ Այս պահանջն ունի ոչ թէ միայն Ղարաբաղը, այլ մեր բոլոր գաւառները։ Այս ամառ «Հորիզոնում» յարուցուեց «տնտեսագիտական մի ընկերութեան» կարևորութեան խնդիրը մեզնում։ Այդ այնքան ուշադրութեան չառնուեց, բայց իրօք մի անյետաձգելի անհրաժեշտութիւն է։ Մենք երբեք յոյսներս չպէտք է դնենք պետութեան միջոցներով լինելիք ուսումնասիրութիւնների, վիճակագրութիւնների վրայ։ Դրանք նախ՝ կարող են չլինել, երկրորդ՝ շատ թերի, անկատար են։ Մեր գաւառների վիճակագրութիւնը, կուլտուրական-տնտեսական կեանքի ուսումնասիրութիւնը պէտք է առաջ տարուի մեր միջոցներով, եթէ կամենում ենք բազմակողմանի վստահելի տեղեկութիւններ ունենալ։ Տնտեսագիտական մի այդպիսի ընկերութեան գոյութիւնը կ'նշտայնէ այդ գործը, ահադին օգուտներ կտայ ազգաբնակչութեան։ Նրա միջոցով հնարաւոր կլինի շատ հրատապ, կենսական խնդիրներ պարզել, ծանօթանալ երկրի կարիքներին, պահանջներին, պարբերական տեղեկութիւններ ստանալ և այլն։ Նա իւր ձեռքը կ'առնէ վեճակագրութիւնը, անկետաներ կը կազմէ և իրազեկ կ'զարմնէ մեր գաւառների մասին, որից մենք այնքան դուրկ ենք։ Եթէ այս ընկերութիւնը բոլոր գաւառների

համար չուսով, հեշտութեամբ գլուխ չգալ, զոնէ կարելի է մի կամ մի քանի գաւառներէ համար տեղծելու Այսպէս Ղարաբաղում կա-
րելի է հարիւրամեակի աւթիւ հիմնել մի այդ տեսակ ընկերութիւն,
որը կուսումնասիրէ Ղարաբաղը, Իսկ այդ դժուար չէ գլուխ բերել:

Եթէ այս բոլոր հարցերին հնարաւոր չէ ճշգրիտ պատասխա-
նել, բայց կայ մի հարց, որին գոնէ պէտք է ենթադրաբար, մո-
տաւորապէս պատասխանելու Այդ է Ղարաբաղի ներկայի խնդիրը.
— Ենչ վիճակի մէջ է Ղարաբաղը, եթէ Ղարաբաղը համեմատորէն
վերցնենք, կտեսնենք որ շատ գաւառներից յետ է մնացել թէ կու-
սութեան և թէ տնտեսական կեանքով Ազգաբնակչութիւնը նոյն-
պէս նուազում է, գլխաւորապէս տուած գաղթականութիւնների
շնորհիւ Երկրի թարմ ոյժերը, ինտելիգենտները, հարուստները
գաղթում են Աովկասի և Ռուսաստանի այլ և այլ քաղաքներու Պա-
ւառի գլխաւոր քաղաքը՝ Շուշին, որ մի ժամանակ լուսաւորու-
թեան, կրթութեան կենդրոն էր, այժմ հայ գաւառական քաղաք-
ների մէջ յետին տեղերից մէկն է բռնում: Հայ-թուրքական ընդ-
հարումները, ճիշտ է, շատ են վնասել Ղարաբաղին, բայց այս դրու-
թիւնը աւելի սոսա՞ջ էր սխուելու Ի՞նչն է այս յետամնացութեան
պատճառը, Սրա պատասխանը կատանանք միայն այն ժամանակ,
կրբ վերն նկարագրուած եղանակով ուսումնասիրուած կլինի Ղա-
րաբաղը:

Մեր օրերում տեղային հայրենասիրութիւնն այլ ևս նախկին
նշանակութիւնը չունի, և այդպէս էլ պէտք է լինի Բայց ամենա-
կերթում մարդկանց մէջ էլ, թէև արդատ կերպով, նշմարելի է
տեղային հայրենասիրութեան նշոյններ Ղարաբաղցիք, որ իրենց
գործունէութեամբ օգտակար են եղել թէ Ղարաբաղին և թէ Աով-
կասի հայութեան, պէտք է առաջինն իրենք մտածեն Ղարաբաղի
ուսումնասիրութեան, ապագայի մասին: Միջոցներ, ոյժեր նրանց
չեն պակասում: Եթէ մի քիչ ոյժ տան իրենց տեղային հայրենա-
սիրութեան, այդ բոլորը կիրաւորուեն Ղարաբաղի ներկան թէև
անմիջիժարական է, բայց անյուս չէ, ևս հաւատացած եմ, որ ու-
սումնասիրութիւնը այդ յետամնացութիւնը կրացատրէ ոչ թէ Ղա-
րաբաղի բնական աղքատութեամբ, մոզովորդի անընդունակու-
թեամբ, այլ մի շարք այլ ժամանակաւոր պատճառներով, որոնց
վերացնել կարելի է:

Չնայած վերե թուած դժուարութիւններին, նախնական աշ-
խատանքների բացակայութեան, ևս այս փորձիկ փորձով կամենում
եմ Ղարաբաղի հարիւրամեակի հետ կապուած մի քանի խնդիրներ
պարզելու Այս դործը ի հարկէ թերի անկատար է լինելու, բայց ոչ
աւելորդ: Այսպիսի մի հարիւրամեակ չպէտք է լուրթեամբ անցնելու
թէև այստեղ արծարծուելիք խնդիրները վերջնականապէս մշակուած

ձեռով չեն հանդէս դալ, չեն լուծուի, բայց կարող են հետաքրքրեցնել, ծանօթացնել, իրազեկ դարձնել Ղարաբաղի անցուղարձին։ Իսկ այս էլ քիչ բան չէ։ Լուելուց, անտեղեկ լինելուց, դոնէ գերադասելի է։

Այս փոքրիկ փորձի մէջ ես նախ՝ համառօտակի կծանօթացնեմ Ղարաբաղի հին անցեալի հետ մինչև ուսումական տիրապետութիւնը, զլիաւորապէս կանգ առնելով մեղքական շրջանի, մեղքներն ուսաց հետ ունեցած յարաբերութեան և զրա հետ կապ ունեցող ինդիքներն զբայ։ Ապա հանգամանքօրէն կրտամ Ղարաբաղի անցեալը ուսաց տիրապետութեան ասի, կպարզեմ ուսաց քաղաքականութիւնը, ուսական տիրապետութեան հետեանքները, արդիւնքները։ Աւելի մեծ տեղ կընէ Ղարաղի այս հարիւր տարուայ ընթացքում ցոյց տուած կուլտուրական-տնտեսական յառաջդիմութեան խնդիրը։ Վերջում ամփոփ կերպով կպատկերացնեմ Ղարաբաղի ներկան։

I

Ղարաբաղի անցեալը մինչև ուսական տիրապետութիւնը

Ղարաբաղ ասելով ներկայումս հասկանում ենք Գանձակի նահանգի Շուշուայ, Զանգեզուրի, Զուանլիքի և Զէքրայիլի գաւառները։ Հնումը Ղարաբաղի մի մասը կոչւում էր Սիւնիք, իսկ միւսը՝ փոքր Սիւնիք կամ Արցախ։ Սիւնիքը և Արցախը թէպէտ Մեծ Հայքի մի մասն են կազմել, բայց միշտ ունեցել են իրենց ինքնուրոյնութիւնը։ Տեղային կեանքն ամեն կողմով այդ երկրներում պահպանել է իւր առանձնայատկութիւնները։ Այդ մինչև օրս էլ նկատելի է։ Սիւնիքը միւս հայերից տարբերուել են իրենց բարբառով, ազրուստի եղանակով, նիստ ու կացով և քաղաքական կեանքով։

Սիւնիքը և Արցախն Արշակունեաց ժամանակ կազմում էին կողմնակալութիւններ, սահմանազխի երկրներ՝ արեւելքում Սրանք կառավարում էին տեղային իշխաններով։ Սիւնեաց երկրում իշխում էր Սիւնեաց իշխանական տոհմը։ Արցախում նոյնպէս ըստ երեոյթին նոյն տոհմից են իշխել։ Միայն Արշակունեաց անկումից յետոյ տեսնում ենք Արցախը ընկած Աղուանից տիրապետութեան տակ։ Մինչդեռ Սիւնիքը պահպանում է իւր անկախութիւնը, և Սիւնեաց իշխանները հայ կեանքում խոշոր դեր են խաղում։ Սիւնիքը լինելով պարսից հարեան՝ միշտ պարսկական ազդեցութեան տակ է գտնուել։ Սիւնեաց տոհմն էլ ըստ մեծի մասին պարսկաւէր է եղել։ Սիւնեաց նախարարութիւնը միշտ ձգտել է անջատման,

Վնխորոնական իշխանութեան ղեկ է գնացել և նոյն իրիկ հասել է թագաւորութեան։ Այդ թագաւորութիւնը սկսուել է ըստ երեոյթին X դարու վերջերին և տևել է մինչև 1166 թ. մօտաւորապէս 190 կամ 196 տարի։ Այս թագաւորութիւնը կոչուում էր Սիւնեաց կամ Բաղաց թագաւորութիւն։ Այնուհետև սելջուկների, թաթարների և ապա Լանկիվմուրի արշաւանքների ժամանակ Արցախը և Սիւնիքը աւերւում, քարուքանդ են լինում, իշխանութիւնները, ազնուականներից շատ շատերը ոչնչանում են։ XIV դարում և յետագայում այդ երկրներում տեսնում ենք դարձեալ հայկական իշխանութիւններ։ Թէ որտեղից են ծագում այդ իշխանութիւնները, հին Սիւնեաց տոհմի շառաւիղներից են նրանց տէրերը, յայտնի չէ։ Վերջին չորջանում այդ իշխանները կոչւում են մելիքներ, իսկ նրանց իշխանութիւնը՝ մելիքութիւն։

Մելիք կամ աւելի ճիշտ Մալիք նշանակում է տէր, իշխան, պետ, կառավարիչ, տանուտէր։ Այս մի տիտղոս կամ կոչում էր, որ տրւում էր պարսից կողմից հայ մեծամեծներին (աշխարհական), Այս տիտղոսը տրւում էր այն հայ պաշտօնականներին կամ հին ազնուական տոհմերին, որոնց յանձնուած էր որոշ զիւղերի կառավարութիւնը կամ որոնք զիւղերի սեփականատէր էին։ Մելիք էին կոչւում և զիւղական տանուտէրներին։ Թէ ինչ ծագում ունէին մելիքներն, այնքան պարզ չէ։ Մելիքների մէջ կային այնպիսիները, որոնք իրենց սերումը էին համարում հին հայկական ազնուական տոհմերից, քայքայ կային և մելիքներ, որոնք այդ տիտղոսն ստացել էին շահերից կամ խաներից։ Մելիքներից նրանք, որոնք հին ազնուական ծագում ունէին, իրենց համարում էին երկրի կատարեալ տէրը, միայն ճանաչում էին պարսից շահի գերիշխանութիւնը, պարսից շահերը, մանաւանդ խաները ձգտում էին մելիքների նշանակութիւնը ձգել, նրանց պետական պաշտօնեաներ ճանաչել, նման պարսից բէկերին, ազաններին։ Մելիքներ կային պարսից Հայաստանի բոլոր կողմերում՝ Սիւնիքում, Արցախում, Երևանի, Նախչուանի խանութիւնների մէջ, նոյնպէս Շէքիի, Շիրվանի, Գանձակի և այլ խանութիւնների մէջ։ Բայց այդ մելիքութիւններից ամենից անկասքը, ինքնուրոյնը և նշանաւորը Ղարաբաղի մելիքութիւններն էին։

Ղարաբաղում հինգ մելիքութիւններ կային, որոնք յայտնի էին խամայի մելիքութիւններ անունով. դրանք էին՝ Վարանդայի, Խաչէնի, Տիգակի, Զրաբերդի և Գիւլստանի մելիքութիւնները։ Գիւլստանը սկսում էր Քիւրակչայ գետից, այսինքն Գանձակի սահմաններից, և տարածւում մինչև Թաոթա գետը։ Զրաբերդն ընկնում էր Թաոթա գետից մինչև Խաչէնա գետը։ Խաչէնը սկսւում էր Խաչէնա գետից մինչև Բալլուշայ գետը։ Վարանդան ընկնում էր Բալլուշայից մինչև Դիզափայտի լեռները։ Տիգակը սկսւում էր Դի-

դաւիայտից մինչև Արաքս գետը: Գիւլիստանի մելիքը Նոսոււմ էր: Գիւլիստան գիւղի մօտ գտնուած իւր ամրոցում Ջրարերդի մելիքի ամրոցն էր: Ջրարերդը Թաւթառ գետի վրայ, Խաչէնի մելիքինը՝ Թարխանաբերդը (Սօխանաբերդ), Գանձասարի վանքի հանդէպ, Վարանդայի մելիքի աթոռանիստն էր: Չանախչին (Աւէտարանոցը), իսկ Տիգակի մելիքինը՝ Տող աւանը: Ղարաբաղի կամ խամսայի այս հինգ մելիքութիւններից միայն մէկը տեղական ծագումն էր— Խաչէնի մելիքութիւնը: Խաչէնի մելիքները շատ հին ծագում ունեն, նրանց նախնիք յիշատակում են Թաթարական արշաւանքներից առաջ: Այս մելիքները սերւած են Հասան-Ջալալեան իշխանական տոհմից: Ջրարերդի մելիքների նախնիք (Մելիք-Իսրայէլեանները) գաղթել են Սիւնիքից (1687թ.), Վարանդայի մելիքների նախորդները (Մելիք-Շահնազարեաններ) գաղթել են Գեղամայ լճի եզերքից (1682 թ.), Տիգակի մելիքների նախնիք (Մելիք-Աւանեաններ) գաղթել են Լոռու գաւառից (երեկ 16-րդ դարու վերջերքին): Գիւլիստանի մելիքների նախնիք գաղթել են Ուտեաց աշխարհի նիժ գիւղից (16-րդ դարու սկզբներում): Այս չորս գաղթական մելիքութիւնները ազնուական ծագումից էին: Նրանց յաջողում է Ղարաբաղում հետզհետէ հողեր և հպատակներ ձեռք բերել: Այդ ժամանակներում Ղարաբաղի ազգաբնակչութիւնը գեո անխառն էր, հայերից բաղկացած: Երևի նրանց հետո թեամբ է յաջողուել այդ տեղերի ազգաբնակչութեան իրենց ենթարկել: Նրանք բոլորն էլ համարւում էին պարսից շահի վասալները, նրանց իրաւունքներն առանձին հրովարտակներով ճանաչուած, հաստատուած էին: Թէ Շահ-Աբաս մեծը և թէ յետոյ Նադիր Շահը առանձին հրովարտակներով ճանաչել և հաստատել են այդ մելիքների իրաւունքները:

Մելիքն իւր երկրում միանգամայն ինքնիշխան էր: Նա անսահման իրաւունքներ ունէր, թէև պարտաւոր էր բնդունուած սովորութիւններով առաջնորդուել: Մելիքը հետեւեալ իրաւունքներն ունէր. Հարկ վերցնել, զօրք առնել, կառավարել, դատել: Նա իւր կողմից նշանակում էր տանուտէրներ և գղիւններ: Սրանց պարտաւորութիւններն էին հարկեր և զինուոր հաւաքել, կարգի վրայ հսկել և փոքրիկ դատեր տեսնել: Տանուտէրը ոռճիկ չէր ստանում, բայց ժողովուրդը պէտք է 2 օր նրա հողը վարէր, փայտ բերէր նրա համար և այլ ծառայութիւններ կատարէր: Մելիքները ժողովրդից ստանում են հետեւեալ հարկերը (մօտաւորապէս). Տասանորդ հացահատիկների և խոտի, իւրաքանչիւր տնից մի ոսկի, որ խանին կամ շահին էր ուղարկւում, յանցագործներից տուրքեր, տուգանքներ: Բացի այս գիւղադիք պարտաւոր էին մելիքի համար տարեկան 20 օր աշխատել (վարել, ցանել և այլն), իւրաքանչիւր 25 տուն մի ծառայ, իւրաքանչիւր 30 տուն մի աղախին էր տալիս մելիքին:

ծառայելու: Նոյնպէս մեկիքին տալիս էին մի վար անող, մի գլիր, մի ձիապան, մի եղապան և այլ ծառայողներ: Իւրաքանչիւր տուն մեկիքին տալիս էր տարեկան մի իշարեո փայտ: Հարսանիքի հրաման ստանալու համար մեկիքին պէտք է փող վճարէին (3—6 բուբլի), Այդ առթիւ պէտք է տալին նաև 1 կուժ գինի, 2 շիշ օղի, եզան սուկին, երիկամունքը, 2 հաւ: Եթէ հարսն ուրիշ գիւղ էր տարւում, աւելի էին վճարում: Մեկիքի նոր տարին նաւասարդին շնորհաւորելիս ամեն տուն պէտք է տանէր նրան մի խնձոր մէջը մի զրամ ցլած, մի կուլա գինի, մի շիշ օղի:

Արդեօք այս հարկերը, ծառայութիւնները մեկիքները վաղուց պահանջելիս են եղել, թէ յետոյ, նոր ժամանակում են հաստատուել, յայտնի չէ: Հաւանական է, որ վերջում խտացրած լինին Մեկիքների մասին այն կարծիքը կայ, որ նրանք ժողովրդին կառավարում էին հայրաքար, նահապետական ձևով, բայց այս հարկերի և ծառայութիւնների թւումից երևում է, որ նրանք յետ չէին մնում վրացի ազնուականներից: Մեկիքի մահուանից յետոյ իշխանութիւնն անգնում էր մեծ որդուն, որ միլիք էր կոչւում, միւս որդիները բէկ էին կոչւում¹⁾:

Ղարաբաղի այս հինգ մեկիքները միմեանց հետ կապուած էին ազգակցական և քաղաքական կապերով: Նրանք կազմում էին մի բաւական զօրեղ դաշնակցութիւն, ամբողջ Ղարաբաղը նրանցն էր: Սրանք և ձեռնարկում են Ղարաբաղի պարսկական տիրապետութիւնից աղատագրման գործին:

XVII դարու վերջերքին արեւելեան երկու մեծ մահմեդական պետութիւնները Տաճկաստան և Պարսկաստան թուլացման, քայքայման նշաններ էին ցոյց տալիս: Եւ այդ բանի մէջ մեծ մասնակցութիւն ունէին Եւրոպական քրիստոնեայ պետութիւնները: Հերթն այժմ հասել էր Եւրոպային սպառնալու մահմեդական աշխարհին: Այս հանգամանքը յայտնի է ներշնչում մահմեդական տիրապետութեան տակ գտնուող տառապող, իրաւազուրկ քրիստոնեայ ժողովրդներին: Սրանց աւելի յուսադրում էին մահաւանդ կաթոլիկ միսիոնարները թէ իրենց մի քանի գործերով և թէ խորհուրդներով: Հայերի մէջ նոյնպէս զարթնում է յուսոյ այդ նշույլը 1678 թ. Էջմիածնում դումարում է մի ժողով Յակոբ կաթոլիկոսի նախագահութեամբ և վեց բարձրաստիճան հոգեորականների ու վեց ազնուական աշխարհականների մասնակցութեամբ:

Ժողովը որոշում է հայոց կաթոլիկոսի գլխաւորութեամբ

1) Մեկիքների մասին այս տեղեկութիւնները հասնի եմ Բաշիու «Խամսայի մեկիքութիւններ»-ից եւ Ե. Ալալյանի «Գանձակի զաւառ», «Զանգեզուրի զաւառ» աշխատութիւններից:

մի պատգամաւորութիւն ուղարկել Եւրոպա: Պատգամաւորութիւնը հասնելով Կ. Պօլիս, Յակոբ կաթողիկոսի մահով և այլ պատճառներով քայքայուած է: Բայց պատգամաւորներից մէկը Խորայէլ Օրին շարունակում է ճանապարհը դէպի Եւրոպա: Երկար ժամանակ մնալով Եւրոպայում, Խորայէլ Օրին ծանօթանում է Եւրոպական պետութիւնների քաղաքականութեան, հետևում է քաղաքական կեանքին, ծանօթանում է կաթողիկէ բարձր հոգևորականների հետ և նրանց միջոցով հետաքրքրեցնում է զանազան իշխանների հայոց վիճակով Օրին աւելի մօտենում է գերմանական իշխան Պֆալցի Կուրֆիւրստին, որն այն ժամանակ ազդակցական շատ կապեր ունէր յայտնի իշխանական աների հետ, և նրան տրամադրում է յօգուտ հայերի: Գերմանական իշխանը խոստանում է օգնել հայերին: Նա Օրինն խորհուրդ է տալիս դիմել և Աւստրիայի կայսեր: Սա նոյնպէս բարեացակամ է վերաբերւում Օրին Պֆալցի Կուրֆիւրստից նամակներ վերցնելով Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսներին, հայ մեկիքներին և վրաց թագաւորին ուղղած՝ վերադառնում է հայրենիք: Նա շտապում է այնտեղ մանրամասն ծանօթանալու տիրող պայմանների հետ և պաշտօնական զինուժն պատրաստելու հայ մեկիքների ու հոգևորականութեան կողմից Եւրոպական պետութիւններին: Եւրոպայում Օրինն աջակցում էին կաթողիկէ բարձր հոգևորականներ, այն պայմանով, որ նա հայերին առաջարկէ հպատակուել Հռոմի պապին: Այնպէս որ հայրենիքում Օրին այդ ուղղութեամբ էլ պէտք է աշխատէր: Այս նոյն իսկ զխաւոր պայմաններից մէկն էր: Օրինն նախ անցնում է Էջմիածին, բայց տեսնելով այդտեղ տիրող չիտիւն, անցնում է Գանձասարի վանքն, ուր յոյս ունէր տրամադրելու հոգևորականութեան յօգուտ իւր ձեռնարկած գործի:

Գանձասարի կամ Աղուանից կաթողիկոսի և հոգևորականութեան համաձայնութիւնը բաւական էր: Գանձասարում Օրին ժողով է գումարում, որին մասնակցում էին կաթողիկոսը և 5 եպիսկոպոս: Օրին հեռաւոր, մութ ակնարկներով ուզում է հասկացնել տալ իւր ձեռնարկութիւնը, Հռոմի եկեղեցուն հպատակուելու պահանջը: Բայց նկատելով որ միացման խնդիրը վէճ ու հակառակութիւն է առաջացնում, իւր նպատակը պարզ չէ յայտնում: Այդ տեղից նա անցնում է Սիւնեաց Անգեղղիթ աւանը, ուր միւլիքներին ժողով է հրաւիրում: Այդ ժողովում (1691 թ. ապրիլի 9-ին) կարգացւում են Կուրֆիւրստի նամակները, Օրին զեկուցում է իւր բանակցութիւնների և ծրագրի մասին, յայտնում է Հռոմին ենթարկուելու առաջարկը և զրա կարեւորութիւնը չեղտում: Ժողովուած մեկիքները մեծ գոհունակութիւն են յայտնում և ամեն խնդրում համաձայնում: Բայց Օրին կամենում է, որ հայ հոգևոր-

բախանութիւնից նոյնպէս մասնակցողներ լինեն, այլապէս գործը կը ժուարանայ: Գտնուում է մի վարդապետ Մինաս անունով Սուրբ Յակոբայ վանքից, որը համաձայնուում է ընկերանալ Օրիին և այսպիսով հայ հոգևորականութեան ներկայացուցիչը լինել: Մեղքները թղթեր են գրում Պֆալցի Կուրֆիւրստին, Աւստրիայի կայսեր, Հռոմի պապին, նոյնպէս Ռուսաց Պետրոս կայսրին: Այդ թղթերի մէջ իրենց ներկայացուցիչ են նշանակում Իսրայէլ Օրիին և Մինաս վարդապետին, տալով նրանց անսահման լիազօրութիւններ: Ռուսաց կայսեր զիմեւ միտքը թելադրում է դարձեալ Օրին, հասկանալով Ռուսաստանի նշանակութիւնն այս խնդրում:

— Օրին Մինաս վարդապետի հետ 1699 թ. ուղևորուեց Եւրոպա՝ Կ. Պոլսի վրայով: Նա Կերմանիա էր գնում ներկայանալու Պֆալցի Կուրֆիւրստին: Այնտեղ նրան ներկայացնում է թղթերը և մանրամասն տեղեկութիւններ տալիս երկրի մասին և թէ բացատրում է իւր ծրագիրը: Կուրֆիւրստը հաւանութիւն է տալիս նրա ծրագրին, բայց կարևոր է գտնում այս գործում Աւստրիայի կայսեր մասնակցութիւնը: Օրին գնում է Վիեննա, ներկայանում է Լէօպոլդ I կայսեր, որը սակայն խիստ զբաղուած լինելով Իսպանական ժառանգութեան չորջր ծագած վէճով և առանձին կարևորութիւն չտալով այդ զիմուքին, միայն յուսադրում է նա խորհուրդ է տալիս Օրիին զիմել Ռուսաց կայսեր օգնութեան, առանց որի հաճութեան չէ կարելի հայերի ազատագրումը, որովհետեւ եւրոպայից եկող զօրքը պէտք է անցնէ նրա հողերով:

Օրին Պֆալցի Կուրֆիւրստից, Լէօպոլդ կայսրից և Լեհաստանի թագաւորից յանձնարարական նամակներ առնելով՝ ճանապարհւում է Ռուսաստան (1701 թ. գարնանը): Պֆալցի Կուրֆիւրստը մի նամակ էլ հայ մեղիքներին է գրում՝ յուսադրելով նրանց: Օրին հասնելով Մոսկուա, Բոհարին Գոլովինի միջոցով ներկայացնում է իւր թղթերը, ծրագիրները: Թէև Պետրոս Մեծը զբաղուած, կլանուած էր Հիւսիսային պատերազմով, բայց և այնպէս ուշադրութիւն է դարձնում Օրիի վրայ: Օրին նրան մանրամասն ղեկուցում է տալիս հայոց վիճակի, զօրքի և այլ խնդիրների մասին, առաջարկում է գրաւած երկրները Ռուսաց, նրանցից մեծ զինւորական և Դիւթական միջոցներ չէ խնդրում: Պետրոս Մեծը բոլոր հարկաւոր տեղեկութիւնները ստանալուց յետոյ, Օրին տեսակցութիւն է նշանակում, որի ժամանակ նրան յուսադրում է: Նա Օրին յայտնում է, որ պատերազմը վերջացնելուց յետոյ կարող է օգնել և թող Կուրֆիւրստն էլ իւր զօրքերն ուղարկէ:

— Պետրոս Մեծը Ռուսաստանի հզօրացման ու բարգաւաճման մեծ ծրագիրներ ունէր: Արեւելքը նոյնպէս մտնում էր այդ ծրագրերի մէջ: Կասպից և Սև ծովերի զբաւումը, Պարսկաստանի և Տաճկաստանի թուլացումը նրա նպատակներից մէկն էր: Պարսկաս-

տանի վերաբերմամբ անանձնապէս նա որոշել էր գործի գիմել, միայն Հիւսիսային պատերազմն այդ խանգարում էր: Որպէնզի նախօրօք ծանօթ լինի երկրի պայմաններին, նա վճարում է մի գեապանութիւն ուղարկել Պարսկաստան, որը պէտքէ ուսումնասիրէր պարսից գործերը: Օրին այդ լսելով, ցանկութիւն է յայանում և խնդրում, որ իրեն էլ մտցնեն այդ դեսպանութեան մէջ: Բայց առաներն այդ դեսպանութեան հարցը դեռ ձգձգում են զբաղուած լինելով պատերազմով: Օրին տեսնելով որ յոյս չկայ մօտ ժամանակում հայերի ազատագրման, քանի որ մի տեղ կուրֆուրստ և կայսրը զրադուււստ են իսպանական ժառանգութեան պատերազմով, իսկ միւս տեղը Պետրոս Մեծը՝ Հիւսիսային պատերազմով, հետեւալ միտքն է յղանում: Գնալ Պարսկաստան և անձամբ ուսումնասիրել այնտեղի գործերը, գալիք ապստամբութիւնը նախապատրաստելու համար: Նա կամենում է Պարսկաստան գնալ որպէս գեսպան, հետը տանելով մեծ շքախումբ բազկացած պատերազմական գործին մօտ անձնաւորութիւններից, որոնք տեղն ու տեղը պէտք է ուսումնասիրէին Պարսկաստանի պայմանները: Որպէս զի այդ դեսպանութիւնը յաջողցնէ և ցանկացած մարդկանց Պարսկաստան տանելու համար գրաւել կարողանայ, Օրին հարկաւոր էր համարում, որ Ռուսաց կառավարութիւնը իրեն որոշ աստիճան, պաշտօն տալ: Դեսպանութիւնը պէտք է լինէր Հոսմի պապի և եւրոպական մի քանի իշխանների կողմից, որոնք պէտք է խնդրեն պարսից Շահին թեթեւացնել քրիստոնեաների դրութիւնը: Օրին իւր այս մտադրութիւնը յայտնում է Ռուսաց կառավարութեան և խնդրում, որ իրեն գնդապետի պաշտօն տան, միևնոյն ժամանակ թոյլտուութիւն է խնդրում եւրոպա գնալու: Պետրոս Մեծը Օրին բոլոր խնդրածները կատարում է, նոյնպէս նամակներ է գրում Կուրֆուրստին և Աւստրիայի կայսրը: Օրին 1704 թ. փետրուարին ճանապարհոււմ է եւրոպա, իսկ Մինաս վարդապետը մնում է Ռուսաստանում՝ հայ մեկիքների հետ կապ պահպանելու համար:

Դեռ 1702 թ. Օրին Միբոն վաթիւն անունով մի հայի ուղարկել էր Հայաստան՝ հայ մեկիքներին և հոգեւորականութեան նամակներ տանելու: Նամակներից մէկն ուղղուած էր Էջմիածնի Նահապետ կաթողիկոսին, մէկն էլ Գանձասարի Սիմէոն կաթողիկոսին: Սիմէոն կաթողիկոսը խոստանում է պատասխանել Մեկիքները կարգալով Օրին և Մինաս վարդապետի գրածները, չափազանց ուրախանում, սգեւորում են և որոշում պատասխանել: Այդ ժամանակ վախճանում է Գանձասարի Սիմէոն կաթողիկոսը, Մեկիքները ներկայացուցիչներ են ուղարկում Էջմիածին, որ Նահապետ կաթողիկոսն իրենց հետ միանայ, բայց վերջինս հրաժարւում է, և Օրին մեկիքների կողմից ուղղուած նամակին ստորագրում է մի

ուն Մինաս վարդապետ, որը կոչւում է նահապետ կաթուղիկոսի փոխանորդ: Մեկիքները որոշում են մի նոր գաղտնի ժողով գումարել, ուր պէտք է վճուէին մի քանի խնդիրներ, որոնց առաջագրել էին Օրին և Մինաս վարդապետը: Այդ ժամանակ Գանձասարի կաթուղիկոսական աթոռն էր բարձրացել: Եւսայի կաթուղիկոսը, որը հենց սկզբից փարւում է Ղարաբաղի հայերի ազատագրման գործին և եւանդու ու ոգևորութիւն ներշնչում ձեռնարկողներին: Այսուհետև Գանձասարը դառնում է կենդրոն այդ շարժման: 1703 թ. փայիսին Գանձասարում կայանում էին գաղտնի ժողով, որին մասնակցում էին ութը մեկիքներ: Այդտեղ գրում են մի շարք թղթեր, ուղղուած Պետրոս Մեծին, նրա մի քանի պաշտօնեաներին, Օրին և այլն:

Օրին գնալով Եւրոպա, Պֆայլի կուրֆիւրստի միջնորդութեամբ յաջողւում է նրան Հոմի գետական նշանակուել, ինչպէս ինքն էր կամեցել: Օրին որպէս Հոմի պապի զեսպան պէտք է Պարսից չահին պապի կողմից մի նամակ տանէր, ուր խնդրում է քրիստոնեաների վիճակը թեթեւացնել: Նոյն բովանդակութեամբ մի նամակ էլ կուրֆիւրստն է տալիս: 1706 թ. Օրին վերադառնում է Մոսկուա: Եւրոպայից նա իւր հետ բերում է մի չքախումբ բաղկացած 50 հոգուց: Դրանց մէջ կային զմեռացան ազգութիւնների և ուարապմունքի պատկանող մարդիկ, որոնց Օրին ընտրել էր այլ և այլ նպատակներով: Պետրոս Մեծից նոյնպէս նամակ ստանալով՝ ուղղուած Պարսից չահին, որի մէջ խնդրում էր քրիստոնեաներին քաջապաշել: Օրին 1707 թ. յունիսին Մոսկուայից ճանապարհւում է գէպի Պարսկաստան: Շամախի հասնելով՝ Օրին երկար ժամանակ մնում է այգտելու ճանապարհին նա մանում է Էջմիածին, ներկայանում է Աղէքսանդր Զուղայիցի կաթուղիկոսին: Օրին զեսպանութիւնը Պարսից արքունիքին մեծ անհանգստութիւն էր պատճառում: Շամախուց Շահին յայտնել էին, որ ինչ որ գաղտնի նպատակներ ունէ այդ զեսպանութիւնը: Չնայած որ այդ զեսպանութեան գլմ վատ էին տրամադրուած Պարսից արքունիքում, բայց Ռուսաց պետութիւնից վախենալով, որոշում են ընդունել (Օրին համարում էր և Ռուսաց զեսպան): Բայց Պարսից կառավարութիւնն այնպէս է անում, որ զեսպանը երկար չմնայ Պարսկաստանում: Օրին չմնալ կերպով իրեն հարկաւոր տեղեկութիւնները, ծանօթութիւնները ժողովելով, հեռանում է Պարսկաստանից: 1709 թ. հասնում է Շամախի, հետը բերելով զանազան իրեր և գաղթական արհեստավորներ: Շամախում Օրին զանազան գործերով ուշանում է: Բայց թէ այդ տեղից և թէ ճանապարհից նա անորադար տեղեկութիւններ էր հաղորդում Պարսկաստանի, Տաճկաստանի գործերի մասին: Գանձասարի Եւսայի կաթուղիկոսը Օրին տեսակցութեան է գալիս և պատուելով նրա

ծրագիրներէր, վճռում է իւր ամբողջ միաբանութեամբ գնալ ներկայանալու Ռուսաց կայսեր՝ փութացնելու ազատութեան գործը։ Օրին կաթուղիկոսի և իւր չքախմբի մի մասի հետ վերջապէս 1711 թ. հասնում է Աստրախան։ Բայց այդտեղ Օրին վաղաժամ կնքում է իւր մահկանացուն։ Նա մեռնում է մի ժամանակ, երբ նոր պէտք է ձեռնարկէր իւր ծրագիրների իրագործման (1711 թ.)

Ղարաբաղի, ինչպէս և առհասարակ հայ քաղաքական շարժման պատմութեան մէջ շատ խոշոր է Օրիի նշանակութիւնը։ Օրին առաջին անգամ հրապարակ է հանել և պետութիւնների ուշադրութեան առարկայ է դարձրել Հայկական հարցը։ Օրին իւր գործունէութեամբ հանդիսանում է թէ հմուտ քաղաքագէտ և թէ անձնուէր, գաղափարական գործիչ։ Միայնակ նա կարողացաւ մոռացուած, անյայտութեան մատնուած Հայաստանի համար բարեկամներ գտնել, նոյնիսկ շահագրգռել Ռուսաց պետութեանը Քանի նա դեռ Եւրոպայի պայմաններին, պետութիւնների պահանջներին և ծրագիրներին ծանօթ չէր, յոյս ունէր, որ Հռոմի պապը, Պֆալցի կուրֆիւրստը և Աւստրիայի կայսրը կարող են Հայաստանի համար մի բան անել, Նա մի ժամանակ այդ բանի մէջ համոզուած էր։ Բայց երբ հասունանում է, ճանաչում է Ռուսաստանը, նա իւր բնական խելքով ըմբռնում է, որ Ռուսաստանն է կոչուած Արեւելքում խոշոր դեր խաղալու։ Եւ այնուհետեւ նա ամեն կերպ կաճեցնում է այդ պետութեան հետաքրքրեցնել, շահագրգռել Հայաստանով, հայերին կապել նրա հետ։ Իւր բարեկամութիւնները, ծանօթութիւնները Եւրոպական ազդեցիկ շրջանների հետ այն օգուտն են ունենում, որ նրանց միջոցով նա Ռուսաց կողմից ուշադրութեան է արժանանում։ Ապագայ ազատուած Հայաստանի համար Օրին որոշ ծրագիր չունէր, նա կլանուած էր ազատութեան գործով, դեռ ձգտում էր հայերին ազատել մահմեդական ծանր լծից։ Նա նոյն իսկ Ռուսաց առաջարկում էր Հայաստանն ազատելուց յետոյ իրենց հպատակութեան տակ առնել։ Առանձին տոհմային կամ այլ շահագրգռական նպատակներ Օրին երբէք չի ունեցել։ Նա գործին վերաբերուել է միանգամայն անշահասէր, նրան ոգևորել է ցեղակիցների թշուառութիւնից ազատելու տենչը։ Նա բազմիցս ցոյց է տուել իւր անշահասիրութիւնը, բոլոր ծախսերը հոգացել է իւր միջոցներով, զրկելով նոյն իսկ իւր բնաւանդները։ Այսպէս որ այս հաղուագիւտ զէմբի լրիւ կենսապրութիւնը մինչև այժմ չունենք¹⁾։

Օրիի մահով բոլորովին ընդհատուած է յարաբերութիւնը Պֆալցի կուրֆիւրստի, Հռոմի հետ։ Բայց Ռուսների հետ շարունակում, աւելի սերտ է դառնում Օրիի ընկեր Մինաս վարդա-

1) Օրիի և նրա շրջանի մասին տեղեկութիւնները քաղել եմ Эзовъ-ի «Сношение Петра Великаго съ Армянскимъ народомъ» աշխատութիւնից և Լէօ-ի «Հայկական Տպագրութիւն»-ից ա. և բ. մաս.

պետը միջնորդ է հանդիսանում հայ մեկիքներին, Գանձասարի կաթողիկոսի և Ռուսաց կառավարութեան միջև՝ Օրին ճանապարհը բացել էր, նրա գործը շարունակում է, այն էլ բաւական կենդանի կերպով, Հանգամանքները, որ Օրին ժամանակ այնքան աննպաստ, վնասեցուցիչ էին, նրա մահուանից յետոյ բաւական փոփոխեցին։ Նախ որ Պարսկաստանն ապրում էր մի ծանր ճգնաժամ, երկրորդ, Ռուսաց կայսրն ազատուել էր Շուեդական պատերազմից և մտածում էր Պարսկաստանի դէմ արշաւանք կազմակերպել։

Հիւսէին Շահի թոյլ կառավարութիւնը պարսից պետութիւնը քայքայման էր հասցրել։ Պարսկաստանը միշտ հզօր էր, երբ կառավարութեան ղեկը կարող մարդկանց ձեռքում էր գտնուում։ Այժմ օգտուելով թոյլ, անընդունակ շահի կառավարութիւնից, ծագում են մի շարք ապստամբութիւններ, որոնցից նշանաւորն էր Աւղանների ապստամբութիւնը Միր-Մամուդի առաջնորդութեամբ։ 1722 թ. Միր-Մամուդը ջարդեց Հիւսէին Շահի զօրքը, Ապահանը պաշարեց։ Շահի որդին Թահմազը փախաւ Ղազուին՝ զօրք հաւաքելու ընդդէմ Աղուանների, բայց յաջողութիւն չգտաւ։ Մինչ Պարսկաստանում այս խռովակ վիճակն էր տիրում, Անգղիկովկասում գրութիւնն աւելի ծանր էր։ Լեզգիները քարուքանդ էին անում երկիրը։ Լեզգիների արշաւանքը հասաւ մինչև Ղարաբաղ։ Ղարաբաղի հայերը որ նախօրօք զօրք էին պատրաստել ազատութեան համար, այժմ այդ գործադրեցին ընդդէմ լեզգիների։ Լեզգիների դէմ դուրս եկաւ և վրաց Վախթանգ թագաւորը։ Հայ և վրացի զօրքերն իրար հանդիպեցին, և այնուհետև զինակցութիւն առաջացաւ այդ երկու կողմերի մէջ, որ շատ անհրաժեշտ էր։ Վրաստանը զեռ աւելի վաղուց քանիցս զինել էր Ռուս կառավարութեան և օգնութիւն հայցել։ Ռուսները նրանց էլ յուսադրել էին և հրահանգել, որ միշտ պատրաստ լինեն դիմաւորելու Ռուսաց զօրքին։ Ահա այս հոգի վրայ էլ առաջանում է հայերի և վրացիների զինակցութիւնը։

Վերջապէս 1722 թ. յուլիսին տեղի ունեցաւ այնքան անձկութեամբ սպասող պարսկական արշաւանքը։ Պետրոս Մեծը բաւական մեծ բանակով ծովով և ցամաքով արշաւեց դէպի պարսից հողերը։ պատրուակը լեզգիներին պատժելն էր, որոնք Շամախին կողոպտել էին, լնտսելով շատ ռուս վաճառականների։ Ռուսաց արշաւանքի լուրը մեծ ցնծութիւն և ոգևորութիւն առաջացրեց հայոց և վրաց մէջ։ Նրանք արդէն պատրաստ սպասում էին Ռուսաց հրաւերին։ Այդ ստանալուն պէս հայոց և վրաց զօրքերն արագ ժողովեցին և Գանձակի մօտերքը բանակ դրին։

Հայոց զօրքը բաղկացած էր տասը հազար ընտիր կուռղներից։ Նրանց զլուին էր անցած Գանձասարի Եսայի կաթողիկոսը և մի քանի մեկիքներ։ Բաւական ուշադրաւ է Գանձասարի Եսայի կա-

թուղիկոսի գործունէութիւնն առհասարակ Այս հոգեւորականը, որ Հասան-Ջալալեան տոհմից էր, ունէր իշխանական, զինւորական յակումներ, բայց իշխանասիրական նպատակներին չէր գործադրում այդ, այլ Ղարաբաղի ազատութեան համար՝ եւ մի մարմնացած եռանդ էր, բայց ազատասիրական ձեռնարկներին մասնակցում էր, ձգտում էր սէր, խաղաղութիւն պահպանել Ղարաբաղի և ընդհանրապէս պարսից Հայաստանի մէջ։ Բանիցս էջմուշին է գնում հաւաստիացնելու իւր հպատակութիւնը, հաւատարմութիւնը Հայոց ընդհանրական կաթողիկոսին, որ զրանից գործը չըսուէ՛։ Նոյն իսկ երբ Գանձասարի ղէմուղէմն առաջ էր եկել նրից Մանկանց հակաթոռ կաթողիկոսութիւնը, որն ընդհանուր գործին խանգարում էր և մատնութիւններ, դաւաճանութիւններ անում, Եւայրին տեսնելով որ իւր հակաթոռ Ներսէս կաթողիկոսին էջմուշինի միջոցով էլ անկարելի է սաստել, ստիպուած եղաւ նրա հետ հաշտութիւն, խաղաղութիւն կնքել յանուն Ղարաբաղի ազատութեան գործի։ Ահա այսպիսի մի նշանաւոր հոգեւորական ունէր Ղարաբաղը, որը ոգի էր ներշնչում ազատասիրական շարժման։

Պետրոս Մեծի պարսկական արշաւանքը շատ կարճատև եղաւ։ Նրա նպատակն էր գրաւել Կասպից ծովնգերբը, որը նոյն իսկ անձամբ չկարողացաւ։ Անհատից վատ լուրեր ստանալով, միւս կողմից էլ պաշարի նեղութիւն կրելով, նա չուտով թողեց պարսկական հողը և վերադարձաւ։ Դերբենդում նա թողեց մի քիչ բերդապահ զօրք ազապայ գործողութիւնների համար։ Հայ և վրացի զօրքերն այս չգիտէին, անհամբերութեամբ սպասում էին Ռուսական զօրքին։ Եւ երբ բաւական ուշ իմացան Ռուսաց վերադարձը, նրանց յուսահատութիւնը, սարսափը պատեց։ Եւ, իրաւ, Ռուսաց վերադարձը այդ երկու ազգերին ձգել էր շատ ծանր կացութեան մէջ։ Նրանք չըջապատուած մահմեդական տիրապետութիւններով՝ հանդէս էին եկել հրապարակօրէն աջակից ռուսական զօրքին, բնական է որ ռուսաց քաջուելուց յետոյ, այդ մահմեդական իշխանութիւնները իրենց բարկութիւնը պէտք է թափէին հայերի և վրացիների վրայ։ Եւ այդպէս էլ եղաւ։

Կ. Եղեանը բացատրելով Պետրոս Մեծի հայոց հետ ունեցած յարաբերութիւնը, պատճառների մէջ ղնում է և այն, որ Պետրոս Մեծի ցանկութիւնն էր հայերին ազատել պարսկական լծից, անկախ քաղաքական նկատառումներից, միայն զի սէր քրիստոնէութեանն¹⁾։ Եղեանի այս միտքը զրբի մէջ հիմնաւորուած չէ։ Հէնց նոյն աշխատութեան մէջ պարզօրէն երևում է Պետրոս Մեծի քաղաքականութիւնը, որը հետու է ամեն տեսակ սիրալիրութիւնից՝ ղէպի այս կամ այն ազգը, կամ քրիստոնէասիրութիւնից, այլ

1) Эзовъ. Сношеніе Петра Великаго съ Армянск. народомъ. XXXI.

առաջ է տանում իւրատեսակ հասկացած Ռուսաստանի շահը: Ինչպէս պարսկական արշաւանքի ժամանակ քրիստոնեաներին անպաշտպան թողնելը, յուսախաբելը, նոյնպէս և նրա պարսից հետ կապած դաշինքը, նոյնը վերջումը տաճկաց հետ, հայերին գաղթեցնելու առաջարկը և այլն գործերը ցոյց են տալիս ակներև կերպով, որ նա իւր քաղաքականութեան յաջողութեան համար հեշտութեամբ զոհում էր հայերին և վրացիներին:

Պարսկաստանի թուլանալը, Ռուսաստանի զրաւունքները չարժում են Տաճկաստանին: Տաճկաց պետութիւնը իրեն համարում էր ժառանգ պարսկական երկրների և շուտով հանդէս է գալիս վաղորդ զրաւելու այդ, քանի սուսները չեն եկել: Ռուսների կասպից ծովեզերքում երկալը շարժել էր և թուրք ազգաբնակչութեան, լեզգիներին ընդդէմ հայերի և վրացիների, որովհետև վերջիններին պատճառ էին համարում առևտական արշաւանքի և այսպիսով ստեղծում է մի ծանր անել գրութիւն: Հայ զօրքը բարեբախտաբար չէ ցրում, ամբանում է կենտրոններում ու զեկալարում պաշտպանութեան գործը: Հայերը տեսնելով լեզգիների և թուրքերի թշնամական գործողութիւնները՝ իրենց զէնքերը դարձնում են զրանց դէմ: Հայ-վրացական զինակցութիւնը շարունակում էր, և հէնց նորոհիւ զրան վրաց թագաւորը հոգացողութիւն է ցոյց տալիս զէպի հայ զօրքը, հմուտ մարդիկ է ուղարկում զեկալարելու և կազմակերպելու այդ զօրքը: Վրաց թագաժառանգ Բակարը մօտ 30 հայ զօրավարներ է ուղարկում Սիւնիք և Ղարաբաղ: Դրանց մէջ էր և Դաւիթ բէկը, որը կազմակերպեց Սիւնեաց ապստամբութիւնը: Ինչպէս Արցախում, նոյնպէս և Սիւնիքում հայ զօրքը սկսում է կռուել թուրք տարրերի դէմ և բաւական յաջողութիւններ է գտնում, մանաւանդ Սիւնիքում, ուր Դաւիթ բէկը չնչին ոյժերով կարողանում է մեծ յաղթութիւններ տանել (1722 թ.) և շուտով մի աչքի ընկնող ռազմական ոյժ ստեղծել: Բայց Անդրկովկասին աւելի մեծ վտանգ էր սպառնում: Տաճկաստանը լսելով Պետրոս Մեծի և Մաղանդարանում ապաւինած փախստական Շահ Թահմազի միջև կնքուած դաշինքի մասին (1723 թ.), որով Ռուսաց են անցնում կասպից ծովեզրայ երկրները, բողոքում է զրա դէմ և զէպի Ռուսաստանը սպառնական դիրք բռնում: Վերջում էլ տեսնելով առևտների թուլութիւնը՝ զօրք է ուղարկում Պարսկաստան՝ զրաւելու նրա որոշ մասերը, մանաւանդ Անդրկովկասը: Օսմանցոց զօրքը 1724 թ. հեշտութեամբ զրաւում է Խոյը, Համադանը և վերջն էլ Վրաստանը: Միայն Ղարաբաղը և Սիւնիքը մնում են աղատ և զէնքի ոյժով դիմադրում են: Ռուսներն անկարող լինելով Օսմանցոց դէմ զուրա գալ, մի դաշինքով (1724 թ.) ճանաչում են նրանց զրաւունքներն Անդրկովկասում, այլ ևս հրաժարւում են այդտեղի քրիստոնեաներին օգնութիւն հասցնել: Ղարաբաղի մեծամեծներն այս մասին չգիտէին: Նրանք որոշում են դիմադրել օսմանցոց, և նեղն ընկնելով նորից դիմումն են անում առևտաց յատուկ պատ-

գամաւորներին միջոցով Այդ պատգամաւորութեան մէջ մտնում էին երկու քահանայ (Անտօն և Պետրոս), որոնք երկուսն էլ Շամախեցի էին և Քեօխլա Ձէլէրի անունով մէկ աշխարհական: Արանք պէտք է Պետրոս Մեծին ներկայացնէին հայոց վիճակը, օսմանցիներին կողմից սպառնացող վտանգը և օգնական զօրք խնդրէին: Պատգամաւորութիւնը ներկայանում է Ռուսաց կայսեր, բայց միութարական պատասխան չէ ստանում: Ռուսները տաճկաց հետ կնքած դաշինքի համաձայն չէին կարող խառնուել Անդրկովկասի գործերին մէջ, Պետրոս Մեծը միայն առաջարկում է հայերին մի միջոյ՝ գաղթել Ռուսաց գրաւած հողերը: Պատգամաւորութիւնը ստանալով այդ մաքով գրութիւններ՝ ուղղուած Եսայի կաթողիկոսին և մեկեքներին՝ վերադառնում է: Ղարաբաղում յամառութեամբ դիմադրում էին օսմանցոց և անհամբեր սպասում ուսաց: Բայց երկար չկարողանալով դիմանալ, առերես հայերը հպատակուում են օսմանցոյ: Օսմանցոյ մի զօրաբաժին բաղկացած մօտ 6000 հոգուց երեք փաշաների հրահանատարութեամբ մտնում է Ղարաբաղ: Այդ զօրքը նախօրեք որոշած ծրագրով հայերը բաժանում են երկու հարիւրով, երեք հարիւրով հայ զիւղերի վրայ և յետոյ կոտորում, ոչնչացնում (1725 թ.), ¹⁾ Հայ մեկեքները և Եսայի կաթողիկոսն այս մասին նոյնպէս մի գրութեամբ յայտնում են ուսաց և օգնութիւն խնդրում: Վերջապէս յայտնում են Անտօն քահանան և Քեօխլա Ձէլէրին (1725 թ. ամառ): Շուտով մեկեքներն ու Եսայի կաթողիկոսը ժողով են գումարում և թղթերը կարգում: Պետրոս կայսեր պատասխանը նրանց յուսախաբութիւն և զարմանք է պատճառում: Օգնութեան յոյս չկար, փոխարէնը թոյլատրում էր գաղթել ուսաց հողը, որի մասին իրը թէ իրենք հայերն էին խնդրել: Այսպիսով Ղարաբաղի հայերի յոյսերը ցուրն են ընկնում, բայց Ղարաբաղը դարձեալ յամառ կերպով գիմադրում է օսմանցոյ և չէ ընկճում: Անդրկովկասում Ղարաբաղը և Սիւնիքը միայն մի երջանիկ քացառութիւն էին կազմում իրենց ազատասիրութեամբ, բնդիմադրութեամբ, թոյլ չէին տալիս օսմանցոյ ներս խուժել: Ղարաբաղում մեկեքները դուրս անցած հայ զօրքին մինչև վերջ ընդիմադրում են օսմանցոյ՝ փառաւոր յաղթանակներ տանելով, իսկ Սիւնիքում Ղաւթիթ բէկը իւր համախոհներով առասպելական գործեր է կատարում: Սիւնիքում դժբախտաբար այդ ազատասիրական շարժումը կարճատեւ է լինում, հանգչում է Ղաւթիթ բէկի մահով (1728 թ.), իսկ Ղարաբաղում լաւ կազմակերպուած լինելով աւելի երկար է տևում: Ղարաբաղում էլ, պէտք է ասել, նախկին եռանդը, ոգևորութիւնը չէ երևում, այստեղ մի տեսակ դադար է նկատելի, որը առաջանում է մէկ ռուսների քաղաքականութեամբ, մէկ էլ Պարսկաստանի հզօրանալով:

(Շարունակելի)

Հ. Մուսայեկեան

1) Ա. Ե. Հայկական տպագրութիւն ք. մաս եր. 555: